

Ն. Ա. Խ. Ա. Ի. Ա. Ն.

Սահակ Մովսիսյանը (Բենսե) երկար տարիներ զրազվել է ոչ միայն բանահավաքությամբ, այլև բանասիրական հետազոտության փորձեր է կատարել գլխավորապես այն աշխարհի մասին, որտեղ ծնվել, մեծացել և ապրել է իր կյանքի լավագույն տարիները՝ լինելով բնիկ մշեցի՝ քաջածանոթ իր ժողովրդի նիստ ու կացին, վարք ու բարքին, նրա մտորումներին ու ընկալմանը՝ հենց իր գործունեության առաջին շրջանից հանդես է եկել իրրե ժողովրդի մարդ, աշխատավորի ջերմ համակիր ու կարեկից:

Ելնելով ժողովրդի ծոցից և օժտված լինելով ժողովրդական լայն աշխարհայացքով, Ս. Մովսիսյանը դեռ երիտասարդ տարիներից նվիրվում է ժողովրդի լուսավորության գործին, գրականությանը և հատկապես ժողովրդական նյութերի հավաքմանն ու գրառմանը:

Ժողովածուն առաջին փորձերից մեկն է, որով Տարոնի աշխարհն հանդես է գալիս իր բանաստեղծական ժառանգության մեծ մասով «ի պատկերի յուրում», այնպես, ինչպես այն եղել է ժողովրդի բերանին, առանց աղարտման, առանց անհարկի միջամտության:

Մուշ-Բուլանըխի բանաստեղծ ժողովրդի բարբառով տարբեր ժամանակներում դրի առած այս ժողովածուի երգերը շուրջ կես դարի (1889—1939) պատմություն ունենւ Բանահավաք, ինչպես նկատելի է, դրի է առել րացառուսպես այն տարբերակները, որոնք ավելի ամբողջական են¹:

Մուշ-բուլանըխցին հորինելիս դիմում է պատկերավարության, որպես կենդանի միջոց մի տրամադրություն կամ մի մտածմունք խորապես տպավորելու՝ Մարդկային հարաբերությունները, երևույթներն ու իրերը նրա մեջ բեկանվում են իրրե կենդանի պատկեր և այնքան բնորոշ, որ հաճախ հիւսնում ես նրա ճաշակի ու վարպետության վրա:

Ահա պատկերավոր համեմատության մի քանի որինակ.

¹ Ս. Մովսիսյանի կյանքի ու գործունեության համառոտ ակնարկը տեսնել «Հայ ժողովրդական հեթաթներ», հատ. X, Սրեան, 1967, էջ 544:

² «Ժողովրդի բերանով»,—գրել է Ս. Մովսիսյանը,—ժողովրդի մեջ տարածված երգերը (խաղեր) ունեն իրենց բազմաթիվ տարբերակները, որոնք մշտապես ալլափոխման և զարգացման մեջ են: Ամեն ոք երգն ասում է ըստ իր հասկացողության, ճաշակի, տալով իրեն հաճելի բառապատկեր, գույն և ոգի: Ըս շատ երգեր եմ լսել, իրենց տարբերակներով, բայց աշխատել եմ, ըստ իս, դրի առնել լրիվը, կատարյալը, այսինքն պահպանել նախ՝ տվյալ բարբառի ճշտությունը, երգի հիմքում ընկած հիմնական մոտիվը, շափի ու հանգերի կանոնավորությունը, որոնց խափանմանը և աղճատմանը հաճախ ենք հանգիպում բարբառին շտիրապետող անփուլթ ու անճաշակ բանահավաքների մոտ»:

Քու ծոցն ընձի նըխշուն օդա:

Քու թուխ-թուխ աչքեր ժամաւան կանթեղ է:

Քու մեջք մընի (կնմանի) խանջաւի բուռ:

Քու ծամերն են նուղ-նուղ սեհաւ:

Քու լեզուն մեղրած կաւազ:

Նա հմալ իմ քու սիրուն՝

Ինչ մեղրեմամ ղեմ ղուլուն:

Նթե քնարական բանաստեղծությունները ժողովուրդն ըստ պահանջի ու շահի հագեցնում է պատկերավորությամբ, եթե մակդիրները ըլսում են բուն նյութից, ապա այդ ամենը նա աշխատում է տալ նոյն ու ղրնդուն հանդերձ, բնաղղարար պահպանելով ատղաշափության կանոնները: Ահա մաքուր յամրական մի օրինակ.

Արեն / առաւ / խամուր / բերդին,

Քու սերն / ընկաւ / մըջ իմ / լերդին,

Նա քեզ / սիրեմ / թրդ ղիս / քերթին:

Ժողովուրդը սիրում է կիրառել նաև բաղաձայնութեւ (ալիտերացիա), ե այդ ո՛չ թե իբրև լեզվախաղ, այլ բանաստեղծական տողը բարեհնչուն և ախորժելի դարձնելու համար: Առածներում, հանելուկներում և շուտասելուկներում հատկապես հանդիպում ենք վարպետորեն կիրարկված բաղաձայնների հանգիստության:

Կիսրար կսրեկըն կռունկներն ին կերած:

Բանաստեղծական հետեյալ տողերի բաղաձայնութի հանդիտությունը, թվում է, թե մի վարպետ բանաստեղծ է հորինել.

Մատիդ մատնիք մալի է:

Ուսնաւ սարեր քարութար,

Իմ բաժ քաժիդ բտրեբար:

Ուսին ուսին սուրբ կուսին:

Ճիւղ ու ճիւղ ու ննդիկ:

Մշո աշխարհն առհասարակ սիրում է ճնավուել խոսքը. մերժելով դորշ ու տափակ ասելու եղանակը՝ ջանում է ուղղակի և փակաղաւթ համեմատություններով, վերադիւ խլատկերներով արտահայտել իր միտքը, երանգ հաղորդել խոսքին՝ բարձրացնելով այն հասարակից ու սովորականից. ահա գեղեցիկ ոճավորման երկու օրինակ.

Ձար աչքն ի շար փուշ՝

Ձար վուշն ի կրակ.

Ձար կրակն ի ծով՝

Մովն անհատակ:

Մծերդ է ուռի, ես կըսենք՝ նուռ էր,

Ձեռ թալի քաղեմ՝ դու ըսիր ժուռ էր...

Ասել, թե միայն քնարական բանաստեղծություններն են պատկերավոր, հուզական ու բարեհնչուն, իհարկե, սխալ կլինեն, բայց ահա ժողովուրդը դիմում է պատմողականությանը՝ այսինքն հորինում է վիպական շնչի ստեղծագործություններ։ Սրանք արդեն իրենց բնույթով տարբերվում են փոքրածավալ գործերից, ենթակա չեն հատած տների (լինի՝ երկյակ, թե քառյակ), այլ հյուսվում են նաև անհանգ ազատ ոտանավորով՝ նախորդի պայմանականությունից լուրջորովին դերծ։

Մուշ-Բուլանրիսի մեծ մասամբ անտիպ այս երգերը մեր կողմից խմբավորված են ըստ բնույթի, որով հեշտանում է սլաքերգը սովորական երգից ջոկելը։ Հարսանեկան երգերը՝ շնայած մեծ մասը պարային բնույթ ունի, առանձնացված են բուն պարերգերից, նպատակ ունենալով վեր հանել հարսանիքի ծիսական կողմը, որ, անշուշտ, կապ ունի նահապետական նիստուկացի հետ, և իրենց եղանակներով հիմնովին տարբերվում են սովորական սլաքերգերից։

«Սիրերգեր» բաժնում ղետեղված են այն գործերը, որոնք բացահայտում են գեղջուկի ու գեղջկուհու պարզ ու հուզաթափալ, անկեղծ ու անմիջական հոգու աշխարհը, որ իր քնարականությամբ ջերմ է ու վաքակիչ։ Այդ երգերն իրենց բնույթով որոշ աղերս ունեն գուսանական երգերի, հայրենների և անտունիների հետ, սակայն ուրույն խորքով ու երանգով։

Մանկական երգերի բաժինը մի առանձին հետաքրքրություն է ներկայացնում։ Այդ երգերը հանդիմար խաղեր ու հանելուկ-շուսասելուկներ են, որոնք ներկայացնում են փոքրիկների առօրյան՝ կուպված բնության, մայրական սիրո, աշխատանքի, դաստիարակության և դվարձ ժամանցի հետ։ Այդ շուսասելուկ և հանելուկ խաղերում մանուկների խլրտացող կյանքն է՝ խաղով, խնդությամբ և անհոգությամբ լեցուն, երգեր, որոնք պարզ են ու հուզիչ, դիպուկ ու սրամիտ, հյուսված խոսքի ու մաքի դարմանալի ճարտարությամբ։

Ժողովուրդն առհասարակ փիլիսոփա է՝ խորհող ու դատող։ Նա սիրում է դարերի դարձն ու փորձը ամփոփել խիստ դիպուկ, իմաստավոր տողերի մեջ և հիմնական միտքը «տեղ հասցնելու համար» հաճախ դիմում է ճոխ ու ճարտար հանգին։ այդպես են սույն ժողովածուում ամփոփված հանգավոր առածները, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ փիլիսոփայական, խոհական ասույթներ։

Ահա ղրանցից գորս՝ մի քանիսը, որոնք հանգավոր չեն.

Ժողովուրդ քնած առյուծ է,

Որ ղարթավ՝ էլ չքնի։

Լեղուն մեկ կր խոսա,

Հացն՝ երկուս։

Աղյուստ կա՝ սև շապիկ է։

«Վիպերգեր» բաժնում ղետեղված են բացառապես այնպիսիները, որոնք անկասկած, վիպական ծագում ունեն՝ տիրուպետող պատմողականն է. այդպիսիք են՝ «Լվերն էկան», «Կիտուռ», «Գացեք տեսեք», «Մշեցոց թուփի դովք», «Կատուն ու մուկ» և մանավանդ՝ «Կարոս խաչ»-ը, որ իր վիպական կուռ կառուցվածքով տարբերվում է մինչ այժմ գրի առած փոփոխաններից։ Վիպերգերը նույնպես եղանակավոր են և թեթև ու ղվարթ պարերգերից տարբերվում են իրենց վիպական հանդիսավորությամբ։

Ժողովածուում նշանակալից տեղ են գրավում բանահավաքի գրառած առակները և երգիծական ղրույցները. խոր և իմաստուն մանրավեպեր են ղրանք՝ իրենց ուսուցողական բարոյախոսությամբ։ Դրանցից շատերը, որպես

տարրերակներ, ընթերցել, գոյություն են ունեցել շատ առաջ, տարրեր ժողովուրդների մոտ, դեռ Եգիպտոսի, Ֆեգրի, Գոշի, Այդեկցու և ուրիշների ժամանակներում, բայց այս առակներն իրենց բնույթով ու մեկնարանությամբ տեղակալ են և մեծ մասամբ տարրերվում են իրենց Նախորդներից։

Կազմողն ամենայն խստությամբ պահպանել է բարբառային հնչական ճշգրտությունը, տների ու նրանց հաջորդող կրկնակների ամբողջականությունը, և, վերջապես, կետադրությունը, այնպես, ինչպես դրի է տեղի բանահավաքը։ Հարբի՝ Մուշ-Բուլանրիսի բարբառը գյուլահապոբյելի դարձնելու միտումով՝ վերջում գլխած է գծվարհասկանալի բառերի բառարան։

Ս. ՏԱՐՈՆՅԱՆ

Երևան
1983 թ.